ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՏԱԹԵՎ ԵՊՍ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(17 սեպտեմբերի 2017 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Սակայն քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով,
քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով,
որով աշխարհը խաչված է ինձ համար,
ես էլ՝ աշխարհի համար»
(Գաղ. Զ. 14):

Սիրելի՛ բարեպաշտ քույրեր եւ եղբայրներ ի Քրիստոս,

Այսօր Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին նշում է իր Տաղավար տոներից վերջինը եւ Ս. Խաչին նվիրված չորս տոներից ամենամեծը՝ Խաչ-վերացի կամ Ս. Խաչի տոնը:

Ինչպես շատ այլ տոների, այնպես էլ այս տոնի հիմքում ընկած են պատմական եւ իրական դեպքեր, որոնց մասին խոսում են պատմիչները եւ որոնք համառոտ ցանկանում եմ ձեզ ներկայացնել:

610 թ. հզորացած Պարսկաստանի թագավոր Խոսրովը հարձակվում է Բյուզանդիայի վրա: 614 թ. Պարսկական զորքերը մտնում են Երուսաղեմ եւ գրավում քաղաքը: Շատերը սպանվում են, մյուսները գերի են վերցվում, այդ թվում նաեւ Երուսաղեմի Զաքարիա պատրիարքը: Պարիսիկները մտնում են Սուրբ Հարության տաճար եւ գերի վերցնում այնտեղ պահվող Սուրբ Խաչը, որի վրա խաչվել էր մեր Տեր Քրիստոս: Բայց Քրիստոսի խաչը, հայտնվելով Պարսկաստանում՝ մի երկրում, որ քրիստոնյա չէր, զարմանալիորեն մեծ հարգանքի է արժանանում: Ինչպես պատմիչն է նշում, շատերն ասում էին, որ քրիստոնյաների Աստված իրենց հյուր է եկել:

Սակայն 622 թ. Բյուզանդիայի Հերակլ կայսրը վերսկսում է պատերազմը պարսիկների դեմ՝ Սուրբ Խաչը վերադարձնելու նպատակով: 628 թ. կայսերական զորքը մտնում է մայրաքաղաք Տիզբոն, սպանվում է Պարսից թագավոր Խոսրովը, եւ հաշտության պայմանագիր է կնքվում: Պայմանագրում հատուկ կետ է մտցվում խաչափայտի վերաբերյալ: Խաչը հանդիսավոր կերպով տեղափոխվում է հայոց Կարին քաղաք, այնտեղից Կոստանդնուպոլիս, որտեղից էլ վերադարձվում է Երուսաղեմ: Ամբողջ ճանապարհին Քրիստոսի խաչափայտը բարձրացվում էր վեր՝ ի տես ժողովրդի: Այստեղից էլ գալիս է տոնի անվանումը՝ Խաչվերաց, վերացումն Ս. Խաչի, այսինքն՝խաչի բարձրացում:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, անշուշտ, Ս. Խաչին նվիրված այս տոնը միմիայն պատմական դեպքերը հիշատակելու համար չէ: Մեզ համար, իբրեւ աշխարհում առաջինը Տիրոջ Լույսը ճանաչած քրիստոնյա ժողովուրդ, Ս. Խաչը մեծագույն խորհուրդ ունի: Երբ ասում ենք խաչ, հասկանում ենք չարչարյալ, խաչեցյալ, բայց միեւնույն ժամանակ հարություն առած եւ հաղթանակած Փրկչին: Պողոս առաքյալն ասում է. «*Կորստյան մատնվածների համար խաչի քարոզությունը հիմարություն է, իսկ մեզ՝ փրկվածներիս համար՝ Ապրծողություն*» *(Ա. Կորնթ. Ա. 18):*

Ինչո՞ւ է այդպես: Պատասխանը շատ հստակ է: Որովհետեւ խաչի մահվամբ ու հարությամբ Քրիստոս մեզ նոր կյանք պարգեւեց: Մենք հեռացանք Աստծուց, լքեցինք Տիրոջը, բայց Աստված երբեք մեզ մենակ չթողեց ու նույնիսկ Իր Միածին Որդուն տվեց, Ով մեր փոխարեն խաչը ելավ: Մենք գիտենք, որ խաչը հին աշխարհում մահվան գործիք էր՝ նախատեսված ծանր հանցագործների ու մարդասպանների համար: Բայց Քրիստոս անմեղ էր, ինչո՞ւ անմեղ մեկին խաչեցին: Այստեղ էլ հարցի պատասխանը հստակ է. Քրիստոս մեզ համար մեռավ, Քրիստոս մեր մեղքերի համար խաչվեց եւ մեր փոխարեն Ինքը հատուցեց: Մեր Տեր Հիսուս Քրիստոս Իր արյունը հեղեց խաչի վրա, եւ խաչը դարձավ այն զոհասեղանը, որի վրա թափված արյունով սրբվեց համայն մարդկության մեղքը: Հովհաննեսի Ավետարանում ասվում է, որ «*Ապրված այնքան սիրեց աշխարհը, որ նույնիսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատա, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա*» *(Հովհ. Գ. 16):*

Սիրելինե՛ր, յուրաքանչյուր հայ եւ ընդհանրապես յուրաքանչյուր քրիստոնյա այս կյանքում իր խաչն ունի եւ անցնում է խաչի իր ճանապարհը, որը փշոտ, դժվարին ու նեղ է, սակայն տանում է դեպի հավիտենական կյանք: Եվ ընթանալ այդ ճանապարհով, նշանակում է անցնել

նաեւ նեղությունների ու զոհողությունների միջով, նշանակում է պատրաստ լինել՝ կրելու այդ խաչի թե՛ դժվարությունը եւ թե՛ քաղցրությունը, բայց միշտ հիշելով, որ մեր կրած փոքր նեղությունները համեմատելի չեն Քրիստոսի կրած սոսկալի չարչարանքների հետ: Քրիստոս ասում է. «Մտե՛ք նեղ դռնով. ինչքան լայն է դուռը և ընդարձակ՝ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում, և բազմաթիվ են նրանք, որ մտնում են դրանով: Ինչքան նեղ է ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն» (Մատթ. Է. 13-15):

Ս. Խաչի փրկարար զորությունը մշտապես ներկա է եղել եւ այսօր էլ շարունակում է ներկա լինել հայ մարդու եւ ընտանիքի կյանքում: Պատահական չէ, որ Հայ Եկեղեցում ամեն ինչ օրհնվում ու սրբագործվում է Ս. Խաչով: Մեզ համար խաչը փրկության ճանապարհն է, եւ ընթանալ փրկության այդ ճանապարհով՝ նշանակում է պատրաստ լինել զոհողությունների հանուն Քրիստոսի, որոնք միայն մաքրում են մարդու հոգին եւ վերափոխում նրան: Պողոս առաքյալն ասում է, որ մեզ՝ փրկվածներիս համար խաչը Աստծո զորությունն է, այսինքն՝ ամեն անգամ, երբ մենք խաչակնքվում ենք, խաչի նշանն ենք դրոշմում մեզ վրա, զգում ենք Քրիստոսի ներկա զորությունը մեր կյանքում:

Ս. Խաչի փրկարար զորությունը մշտապես ներկա է եղել եւ այսօր էլ շարունակում է ներկա լինել հայ պետականության եւ հայի ինքնության կերտման ու պահպանման սրբազան առաքելության մեջ: Դարեր շարունակ մենք Ս. Խաչի նշանով հաղթանակել ենք ոչ միայն չարի աներեւույթ զորություններին, այլ նաեւ հայ ժողովրդի տեսանելի թշնամիներին, ովքեր ցանկանում էին բնաջնջել հայի տեսակը: Եվ ինչպես Քրիստոս հարություն առավ, այդպես էլ հայ ժողովուրդը մշտապես Տիրոջ Ս. Նշանով հառնել է մոխիրներից եւ հարություն առել՝ որպես Տիրոջ ընտրյալ ժողովուրդ:

Սիրելի՛ ժողովուրդ հայոց, մենք պետք է հավատարիմ մնանք այն խաչին, որ մեր նախնիներն իրենց ամեն հոգով, սրտով, նույնիսկ նահատակության գնով պաշտպանեցին եւ մեզ հանձնեցին, որպեսզի մենք էլ մեզանից հետո եկող սերնդին նույն հպարտությամբ ու նախանձախնդրությամբ հանձնենք այն՝ ի վայելում եւ ի պահպանություն: Փչոտ ճանապարհներ են անցել մեր նախնիները հանուն մեր սրբությունների պաշտպանության, եւ եկեք այսօր մենք անտարբեր չգտնվենք այն նվիրական արժեքների հանդեպ, որոնց համար արյուն է թափվել եւ նահատակություններ են եղել: Շատ հաճախ մենք պարծենում ենք, որ առաջին

քրիստոնյա ժողովուրդն ենք աշխարհիս երեսին, իրապես հպարտություն է, բայց եկեք գործերով փաստենք, որ արժանի ենք այդ պատվավոր կոչմանը: Խաչն իբրեւ զարդ կրող, հնամենի վանքերի ու եկեղեցիների պատերը փչացնող, սրբություններն անարգող, նախնիների հավատն ուրացող, կեղծ արժեքներ դավանող հայ մարդը չի կարող արժանի լինել առաջին քրիստոնյա ժողովուրդ կոչմանը: Ամեն շահ, կեղծ արժեքներ, նյութական բարիքներ անցողիկ են, սիրելինե՛ր, ինչպես անցողիկ է մարդկային մարմինը, քանզի հող էր եւ հող պիտի դառնա: Մինչդեռ անմահ է հոգին, անմահ են մեր հայրենանվեր գործերը՝ հանուն Աստծո, Հայրենիքի եւ Մայր Եկեղեցու:

Եկեք վերադառնանք այն ճշմարիտ արժեքներին, որոնց համար արյուն է հեղվել, ճակատագրեր են խեղվել, որոնց համար խաչի ճանապարհ է անցել մեր ժողովուրդը, բայց միեւնույն ժամանակ հարության ու լուսավոր ապագայի տեսլականով, հզոր ու անկախ պետականություն ունենալու երազանքով՝ համախմբված Հայ Առաքելական մեր Մայր Եկեղեցու սրբազան կամարներից ներս:

Սիրելի՛ հավատացյալ հայորդիներ, եկեք երբեւէ չթուլանանք մեր հավատի մեջ ու չհուսահատվենք, չերկմտենք ու աներկբայորեն հավատանք Տիրոջը՝ կրկնելով Պողոս առաքյալի հետեւյալ խոսքը, որ ասում է. «Քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղ. Զ. 14):

Իրապես, թող Տիրոջ Սուրբ Խաչի նշանը մեզ համար պարծանք լինի եւ պահպանի ամեն տեսակ փորձություններից: Հավատարիմ լինենք մեր Մայր Եկեղեցուն, սրբություններին, քրիստոնեական արժեքներին, մինչեւ անգամ այդ արժեքների համար խաչվելու եւ նահատակվելու աստիճան՝ ի պայծառություն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ ի զորացումն մեր Սուրբ Հայրենիքի. ամեն: